ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Էլ. հասցե sovxoz444@mail.ru

N 01-148

<<06>> 09 2021թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ

Պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից ընդունված 2021 թվականի սեպտեմբեր ամսվա 23-Ա որոշումը:

Առդիր՝ 2 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար Գ. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 սեպտեմբերի 2021 թվականի N 23-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 57-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի II գլխով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշումով, հաշվի առնելով այն, որ Կարապետ Վրեժի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 19072017-04-0030 վկայական տրված 19,07.2017 Ոսկեհատ համայնքի 1 փողոց թիվ 44 հասցեում գտնվող հողամասի վրա ինքնակամ կառուցված 459.0քմ արտաքին մակերեսով շինությունները ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի սահմանափակումների ցանկում, կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերը և չի առաջացնում սերվիտուտ, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների՝ ծրագրի պայմաններին և Կարապետ Վրեժի Դավթյանի 2021 թվականի սեպտեմբերի 2-ի դիմումը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի 1 փողոց 44 հասցեում գտնվող 900.0քմ մակերոսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա գտնվող ինքնակամ կառուցված ընդհանուր 459.0 քմ արտաքին /մակերեսով շինությունները օրինականացնել , արտաքին ՝ բնակելի տուն 68.5 քմ, պահեստ 302.6 քմ, ծածկոց 80.1 քմ, պարիսպ 7.8 քմ/ ճանաչել օրինական :

2. ինքնակամ կառուցված ընդհանուր 459.0 քմ արտաքին /մակերեսով շինությունները օրինականացնել , արտաքին ՝ բնակելի տուն 68.5 քմ, պահեստ 302.6 քմ, ծածկոց 80.1 քմ, պարիսպ 7.8 քմ/ օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետրը՝ 1209 դրամ է:

3.Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը սահմանվում է՝ ինքնակամ կառուցված ընդհանուր 459.0 քմ արտաքին /մակերեսով շինությունները/ արտաքին ՝ բնակելի տուն 68.5 քմ, պահեստ 302.6 քմ, ծածկոց 80.1 քմ, պարիսպ 7.8 քմ/ ընդամենը՝ 554931 /հինգ հարյուր հիսուն չորս հազար ինը հարյուր երեսունմեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ 900325184159/:

4.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ**

2021 թվականի սեպտեմբերի 2
հ. Ոսկեհատ